ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«18» հունվարի 2019 թվականի N 30-Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 2-Ի ԹԻՎ 38-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ և 34-րդ հոդվածի 1-ին մասերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման պահանջներով, ***որոշում եմ.***

1. Համայնքի ղեկավարի 2018 թվականի փետրվարի 2-ի «Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու, հանձնաժողովի անհատական կազմը հաստատելու և համայնքի ղեկավարի 2016 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 258-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 38-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը.

1) որոշման առաջին կետում «Թադևոսյան Մարգարիտա Միխայիլի - աշխատակազմի գլխավոր մասնագետ» բառերը փոխարինել «Խաչատրյան Հեղինե Կարապետի - աշխատակազմի առաջատար մասնագետ» բառերով, «Աղաջանյան Սաթենիկ Արամայիսի - աշխատակազմի առաջին կարգի մասնագետ» բառերը փոխարինել «Վարդանյան Լիլիթ Վահագնի – Ջրվեժի միջնակարգ դպրոցի տնօրեն» բառերով:

2. Հաստատել Ջրվեժ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2019 թվականի աշխատանքային տարեկան ծրագիրը, համաձայն հավելվածի:

3. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի առաջատար մասնագետ Հեղինե Խաչատրյանի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հունվարի 18
գ. Ջրվեժ

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքի
ղեկավարի 2019 թվականի
հունվարի 18-ի N 30-Ա որոշման

ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ

1. Ջրվեժ համայնքի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2019 թվականի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) մշակվել է՝ Ընտանեկան օրենսգրքի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից մշակված «Խնամակալության և հոգաբարձության մարմիններին կից գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների գործունեության վերաբերյալ մեթոդական ուղեցույցի» պահանջներին համապատասխան:

Ծրագիրը համահունչ է երեխաների պաշտպանության համակարգի բարեփոխումների պետական քաղաքականությանը և երեխայի իրավունքների պաշտպանության 2019 թվականի տարեկան պետական ծրագրին:

II. ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

2. Ծրագրի նպատակն է՝ Ջրվեժ համայնքի երեք բնակավայրերում բարելավել երեխաների բնականոն զարգացումը, նպաստել ազգային և համամարդկային արժեքներ կրող անձի ներդաշնակ ձևավորմանը:

3. Ծրագրի հիմնական խնդիրն է ապահովել՝

1) երեխաների, ինչպես նաև անգործունակ կամ սահմանափակ գործունակ ճանաչված քաղաքացիների իրավունքների և շահերի պաշտպանությունը,

2) ընտանիքում ապրելու ու դաստիարակվելու երեխայի իրավունքը,

3) կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, այդ թվում՝ առանց ծնողական խնամքի մնացած երեխաների իրավունքների և շահերի պաշտպանությունը, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ խնդիրներ:

4.Ծրագրի նպատակին հասանելիության ապահովմանն ուղղված գործառույթն է՝

1) Բացահայտել՝

ա.առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և այն չափահաս անձանց մասին տեղեկությունները, ովքեր ճանաչվել են անգործունակ կամ սահմանափակ գործունակ,

բ.ծնողների, ծնողական խնամքի բացակայության, ծնողական խնամքից զրկվելու այլ դեպքեր,

գ.համայնքում երեխայի ծննդյան փաստի՝ օրենքով սահմանված կարգով չգրանցման, ինչպես նաև երեխաների մահացածության, համայնքում երեխաների թրաֆիքինգի դեպքերը,

դ.կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին:

2)Իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ Հանձնաժողովի լիազորությունների շրջանակներում վերապահված հետևյալ գործառույթները՝

ա. սկզբնական հաշվառման վերցնել առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին,

բ. անցկացնել երեխայի և այն անձի (անձանց) կյանքի հետազոտություն, ովքեր հավակնում են նրա դաստիարակությանը և դատարան ներկայացնել հետազոտության ակտն ու դրա հիման վրա վեճի էության մասին եզրակացությունը,

գ. այլ գործառույթներ:

5.Երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում 2019 թվականին նախատեսվող միջոցառումները՝

1)երեխաների իրավունքների պաշտպանության թեմայով կազմակերպել հանձնաժողովի ընդլայնված նիստ՝ շահագրգիռ անձանց մասնակցությամբ,

2)թափառակաշրջիկությամբ, մուրացկանությամբ զբաղվող, հակասոցիալական վարք դրսևորող երեխաների հայտնաբերման նպատակով ոստիկանության բաժնի հետ համատեղ կազմակերպել ստուգայցեր,

3)մշակութային և ուսուցողական միջոցառումների միջոցով նպաստել կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող, մասնավորապես՝ սահմանափակ կարողություններ ունեցող, սոցիալապես անապահով, առանց ծնողական խնամքի մնացած և հակասոցիալական վարք դրսևորող (իրավախախտում կատարած) երեխաների աշխարհայացքի ձևավորմանը ու զարգացմանը, հայրենասիրական ու գեղագիտական դաստիարակությանը, ազգային արվեստին ու մշակութային ժառանգության հաղորդակցմանը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հունվարի 2019 թվականի N 31-Ա

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱՀԱՏԱԿԱԳԾԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 4-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացիներ Ալեքսան Ռաֆիկի Գալստյանին և Սուսաննա Գուրգենի Խաչատրյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Այգեգործական զանգվածի 4-րդ թաղամասի թիվ 7 հասցեի հողամասում տալ ճարտարապետահատակագծային առաջադրանք՝ մեկ հարկանի բնակելի տան կառուցման նախագծային փաստաթղթերի մշակման համար:

2.Որոշման կատարման հսկողությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հունվարի 21
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հունվարի 2019 թվականի N 32-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել «ՀԱՍ-Սուսաննա» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Սամվել Ռուստամի Պողոսյան, 2019 թվականին զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացմամբ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ թաղամասի թիվ 6/8, 2-6/9, 2-6/8/1, 2/6-9/1 հասցեներում,

2. Թույլատրել ստորև նշված անհատ ձեռնարկատերերին՝ 2019 թվականին զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով՝

1) անհատ ձեռնարկատեր Գրիգոր Նորիկի Գրիգորյանին, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 15-րդ փողոցի թիվ 11 հասցեում,

2) անհատ ձեռնարկատեր Արլետտա Ալեքսեյի Մելիքյանին, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի Մելքոնյան փողոցի թիվ 49 հասցեում:

3. Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

4. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հունվարի 21
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» հունվարի 2019 թվականի N 33-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ և 4-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1. Թույլատրել «Հասմիկ և եղբայրներ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Սայաթ Ռուբենի Գրիգորյան, 2019 թվականին զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի իրացմամբ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 19-րդ փողոցի թիվ 1 հասցեում:

2. Պարտավորեցնել «Հասմիկ և եղբայրներ» ՍՊԸ-ին, տնօրեն՝ Սայաթ Ռուբենի Գրիգորյան, մուծելու սահմանված տեղական տուրքը:

3. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հունվարի 21
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվարի 2019 թվականի N 34-Ա

ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ, 4-րդ և 5-րդ կետերի պահանջներով, ***որոշում եմ.***

1.Թույլատրել ստորև նշված սուբյեկտներին՝ 2019 թվականին զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացմամբ, ժամը 24^{00}-ից հետո հանրային սննդի և զվարճանքի կազմակերպմամբ՝

1) անհատ ձեռնարկատեր Ուստիան Վալոդյայի Խասոյանին, Ջրվեժ համայնքի Զորաղբյուր գյուղի 1-ին թաղամասի թիվ 25/1 հասցեում,

2) անհատ ձեռնարկատեր Սուրեն Թեմուրի Սամսոնյանին, Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 14-րդ փողոցի 1-ին փակուղու թիվ 5/1 հասցեում:

2. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Սեյրան Վաչագանի Թովմասյանին, 2019 թվականին զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ և իրացմամբ, ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի իրացմամբ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 18-րդ փողոցի թիվ 25-27 հասցեում:

3. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Սուրեն Վիրաբի Գասպարյանին՝ 2019 թվականին զբաղվելու զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքով Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 14-րդ փողոցի թիվ 1-3 հասցեում:

4. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գարեգին Վարդանի Պողոսյանին՝ 2019 թվականին ժամը 24^{00}-ից հետո զբաղվելու հանրային սննդի կազմակերպմամբ Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 2-րդ դաշտի թիվ 7/1 հասցեում:

5. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Գևորգ Հակոբի Գրիգորյանին՝ 2019 թվականին զբաղվելու զբաղվելու ոգելից և ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքով Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 3-րդ փողոցի թիվ 12 հասցեում:

6. Պարտավորեցնել տնտեսվարող սուբյեկտներին՝ մուծելու սահմանված տեղական տուրքը:

7. Հանձնարարել ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնին՝ հաստատված թույլտվությունները հայտատուներին տրամադրել տեղական տուրքի վճարումը կատարելուց հետո՝ 3-օրյա ժամկետում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հունվարի 23
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվարի 2019 թվականի N 35-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի առաջին մասի 6-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի թիվ 596-Ն որոշմամբ հաստատված կարգով, ***որոշում եմ.***

1.Քաղաքացի Նորայր Խաչատուրի Ասլանյանին տալ 439,5 քառ.մետր ընդհանուր մակերեսով նկուղային հարկով երկհարկանի բնակելի տան, օժանդակ շինության և պարիսպի կառուցման շինարարության թույլտվություն՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 50-րդ փողոցի թիվ 31 հասցեի տնամերձ հողամասում:

2.Պարտավորեցնել Նորայր Խաչատուրի Ասլանյանին՝ շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ, տեղեկացնել համայնքի ղեկավարին, համաձայն N 2-5 ձևի:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հունվարի 23
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս +37410644929, էլ. փոստ info@Jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվարի 2019 թվականի N 36-Ա

ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ջրվեժի համայնքապետարան է դիմել քաղաքացի Շիրին Խոդեդանի Ավդոյանը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջովք գյուղի 10-րդ փողոցի թիվ 10 հասցեի արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասում առկա շինությունների գործառնական նշանակությունը ավտոմեքենաների վերանորոգման բոքսից փոխադրելու գյուղատնտեսական արտադրական նշանակության՝ պահեստի (հիմք՝ առուվաճառքի պայմանագիր, վավերացված 2018 թվականի նոյեմբերի 26-ին, համայնքի ղեկավարի 2018 թվականի դեկտեմբերի 13-ի թիվ 520-Ա որոշում):

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմամբ հաստատված կարգի պահանջով, ***որոշում եմ.***

1.Շիրին Խոդեդանի Ավդոյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջովք գյուղի 10-րդ փողոցի թիվ 10 հասցեի՝ արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողամասում առկա շինությունների գործառնական նշանակությունը արտադրական նշանակության՝ ավտոմեքենաների վերանորոգման բոքսից փոխադրել գյուղատնտեսական արտադրական նշանակության՝ պահեստի:

2.Պարտավորեցնել Շիրին Խոդեդանի Ավդոյանին՝ որոշումից բխող իրավունքները գրանցել Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի կադաստրի կոմիտեի՝ անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանումում:

3.Հողամասի գործառնական նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Թադևոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հունվարի 23
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«23» հունվարի 2019 թվականի N 37-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել քաղաքացի Նարինե Սուրիկի Աարգսյանի (ծնված՝ 1963 թվականի փետրվարի 26-ին) դիմումը, որով ցանկություն է հայտնել օրինականացնել սեփականության իրավունքով իրեն պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 22-րդ փողոցի թիվ 7/1, 9/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շինությունները (հիմք՝ անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման N 2276117 վկայական, «ԴԱ-ԴԷ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից 2018 թվականի դեկտեմբերի 10-ին կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագիծը):

Համաձայն համայնքի կադաստրային քարտեզի և «ԴԱ-ԴԷ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի կողմից կազմված և սահմանված կարգով հաստատված հատակագծի պարզվել է, որ Նարինե Սուրիկի Աարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 22-րդ փողոցի թիվ 7/1, 9/1 հասցեի տնամերձ հողամասում 2017 թվականին ինքնակամ կառուցվել է բնակելի տուն՝ 1238,8 քառ.մետր, ծածկոց՝ 31,0 քառ.մետր, Էլ. ենթակայան՝ 22,3 քառ.մետր, պահակատուն և ավտոտնակ՝ 97,2 քառ.մետր, ամառային խոհանոց՝ 110,4 քառ.մետր, աստիճանավանդակ և հենապատ՝ 14,6 քառ.մետր, ջրավազան՝ 72,8 քառ.մետր և պարիսպ՝ 25,0 քառ.մետր արտաքին մակերեսներով:

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 10, 11, 13 կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Նարինե Սուրիկի Աարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 22-րդ փողոցի թիվ 7/1, 9/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված շենք-շինությունների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ***որոշում եմ.***

1. Նարինե Սուրիկի Աարգսյանին սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 22-րդ փողոցի թիվ 7/1, 9/1 հասցեի տնամերձ հողամասում ինքնակամ կառուցված բնակելի տունը՝ 1238,8 քառ.մետր, ծածկոցը՝ 31,0 քառ.մետր, Էլ. ենթակայանը՝ 22,3 քառ.մետր, պահակատունը և ավտոտնակը՝ 97,2 քառ.մետր, ամառային խոհանոցը՝ 110,4 քառ.մետր, աստիճանավանդակ և հենապատը՝ 14,6 քառ.մետր, ջրավազանը՝ 72,8 քառ.մետր և պարիսպը՝ 25,0 քառ.մետր արտաքին մակերեսներով, համարել օրինական:

2. Սահմանել, որ հողամասի սեփականատերը.

1) սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228218 հաշվին պետք է վճարի Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաշվարկված 3 803 228 (երեք միլիոն ութ հարյուր երեք հազար երկքառասուն ութ) Հայաստանի Հանրապետության դրամ օրինականացման վճարը.

2) իր միջոցների հաշվին պետք է վճարի կառույցի գույքային իրավունքների պետական գրանցման հետ կապված վճարներն ու տուրքերը:

3.Սահմանել, որ սույն որոշման ընդունման օրվանից 60-օրյա ժամկետում օրինականացման համար սահմանված վճարումը չկատարելու դեպքում, նշված ինքնակամ կառույցը ենթակա չէ պետական գրանցման, իսկ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել աշխատակազմի գլխավոր մասնագետ Վահե Սիրականյանի վրա:

5.Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է աշխատակազմի քարտուղար Սուսաննա Մաղանոսյանը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ.ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հունվարի 23
գ. Ջրվեժ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՎԵԺ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Ջրվեժ համայնք, Մելքոնյան փողոց 76
Հեռախոս՝ +37410644929 Էլ.փոստ՝ info@jrvezh.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հունվարի 2019 թվականի N 38-Ա

ՀՈՂԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ԵՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի, «Քաղաքաշինության մասին» օրենքի 14^3-րդ հոդվածի 12-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 25-րդ կետի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջներով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 11-ի թիվ 14-Ն որոշումը, ***որոշում եմ.***

1.Վարդան Գրիգորի Գալստյանին, Հրանտ Ահարոնի Ղազարյանին, Ավագ Մանուկի Եղիազարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0338-0103 կադաստրային համարի գյուղատնտեսական նշանակության վարելահողը՝ 750,0 քառ.մ մակերեսով, փոխադրել բնակավայրի հողերի կատեգորիա՝ օրենսդրությամբ սահմանված կարգով բնակելի կառուցապատման համար (հիմք՝ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական N 09102018-07-0066, տրված 2018 թվականի հոկտեմբերի 9-ին):

2.Վարդան Գրիգորի Գալստյանին, Հրանտ Ահարոնի Ղազարյանին, Ավագ Մանուկի Եղիազարյանին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող Ջրվեժ համայնքի Ջրվեժ գյուղի 07-057-0338-0103 կադաստրային համարի 750,0 քառ.մ մակերեսով տնամերձ հողամասին տրամադրել հասցե՝ համայնք Ջրվեժ, գյուղ Ջրվեժ, 2-րդ թաղամաս, թիվ 4/32/1:

3.Առաջարկել Վարդան Գրիգորի Գալստյանին, Հրանտ Ահարոնի Ղազարյանին, Ավագ Մանուկի Եղիազարյանին, եռամսյա ժամկետում Ջրվեժ համայնքի բյուջեի N 900105228176 հաշվին վճարելու հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը՝ 3 363 750 (երեք միլիոն երեք հարյուր վաթսուներեք հազար յոթ հարյուր հիսուն) Հայաստանի Հանրապետության դրամ:

4.Աշխատակազմի առաջատար մասնագետ Հուսիկ Գրիգորյանին՝

1) իրականացնել հսկողություն սույն որոշման երրորդ կետի նկատմամբ,

2) սույն որոշման առաջին կետում նշված հողի նպատակային նշանակության փոփոխությունը պետական գրանցում ստանալուց հետո ընդգրկել համայնքի տարեկան, ընթացիկ հաշվառման և համայնքի հողային հաշվեկշռում:

5.Աշխատակազմի քարտուղարին՝ հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում տեղեկացնել քաղաքաշինության պետական կոմիտե և անշարժ գույքի նկատմամբ իրավունքները գրանցող պետական մարմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՌՈԲԵՐՏ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2019 թ. հունվարի 24
գ.Ջրվեժ